



անգութ ներոնի ժամանակ երբ հաւատացեալ Քրիստոնեայններ անխնայ կոտորուում էին Մարտիրոս ժողովուրդն Պետրոսէն խնդրեցին որ ինքն պահ մի խոյս տայ Հռովմէն. մտադրութիւն ունեցաւ Պետրոս, բայց նոյն գիշեր երազ մի տեսաւ որպէս թէ Հռովմէ դուրս կ'ենէլ, Քրիստոս ելաւ իւր դէմ, հարցուց Պետրոս՝ Sker յո՞ երբաս, ասաց կ'երթամ ի Հռովմ, խաչուիլ ծեր տեղ :

Է՛ սիրեմ զքեզ, խոյս տուիր Կիլիկիայէն, Յիսուս քեզ չպատահեցա՞ւ եւ դու ի՞նչ պատասխան տուիր: Թոյլ արա ինձ, Տէր, ոչ կարեմ. առ քո խաչ ասացիր եւ դու խոյս տուիր:

Ստացեալ եմ վաղուց ծեր եւ պատրիարքին այն երկու փոխանակուած ընդարձակ նամակներ, որոց մէջ կային մեծամեծ կուտակեալ փաստեր, միայն Աւետարան չկար:

Ես Սրբազան Պատրիարքին մի խորհրդաւոր նամակ գրեցի, յայտնեցի իմ իրաւացի սուր դիտողութիւն թէ ինչո՞ւ այնչափ աճապարեցիր. վեց տարի տատանուած էր այդ խնդր թող վեց ամիս եւս տատանէր, ինչո՞ւ այնքան համոզիչ առաքեալներով նեղեցիր զինք: Թոյլ չտուիր որ նա ժամանակ ունենար իւր խղճին հետ հաշտուելու: Տուիր վերջնական հրաժարականդ. եւ կարծում ես թէ հանգիստ ես եւ սիրտդ անխռով է, ոչ դու հանգիստ կարող չես լինել: Յոլովակի փաստերուդ մէջ դու մի բան յառաջ բերում ես, այն է դու կը ցանկաս եւ սիրելի (է) քեզ մնալ խոնարհ վիճակում իբրեւ Միաբան Ս. Երուսաղէմի, այսինքն խաչի երկրին՝ առանց խաչի եւ մնալ եպիսկոպոս Մայր Աթոռին քան լինել Կաթողիկոս քանդուած Աթոռին: Յաւէտ եւս լաւագոյն չէ՞ր որ դու լինէիր Քրիստոսին եւ Քրիստոսով համակցորդ երկուցուն եւս: Քա՛ւ թէ ես այս մտածութեամբ համարիմ զքեզ Քրիստոսէն հեռացած. ոչ դու Քրիստոսին ես Աւետարանին աշակերտութեամբ. Միայն նորա խաչէն խոյս տուիր. Պետրոսի նման չուզեցիր Թափօր լեռնէն վար իջնալ, Քաղաքային եւ աշխարհային մտածումներ զքեզ յոռետեսութեամբ վարեցին: Սրտմտեցար էնթրիկներուն համար եւ լուծ թօթափեցիր: Անցաւ քէնէ այդ բաժակ բայց դու մի կարծեր որ խաչի աշակերտին բաժակներ կը պակսին: Օ՛ն ուրեմն պատրաստեա դու քեզ երկրորդ բաժակին. թէ մեռանի ծերունի Հայրիկ, զրիս յիշատակաւ յիշէ դու զիս:

Աղօթակից ձեզ

Վշտակիր

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

1902 Mars 29

